ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ԳՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-19/01 ծածկագրով բաց մրցույթով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

գ. Սարուխան **«19» «08» 2019թ.**
ժ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ա. Ասլանյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ի. Բաղալյան, Ս. Հովհաննիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը և հիմք ընդունելով՝

- <<Գավառի ՃՇՇ>> ԲԲԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվության մեջ նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը, և որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (գնահատման թերթիկները, որակավորման փաստաթղթերը և վճարման անդրորագիրը կցվում է)՝
- <<Գավառի ՃՇՇ>> ԲԲԸ -ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից, ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջները՝ հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն՝ անգործության ժամկետ չսահմանելով:

Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելուց հետո ընտրված մասնակցի հետ սկսել պայմանագիր կնքվելու գործընթացը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. **Գնահատող հանձնաժողովը որոշեց.**

Գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու օրը, ժամը 12:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Սարուխան, Հ. Աբրահամյան 120 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Ասլանյան

Անդամներ՝ _____ Ի. Բաղալյան

_____ Ս. Հովհաննիսյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան